Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

12-րդ դասարան

Տևողությունը՝ 2 ժամ 30 րոպե

Վաղնջական ժամանակներից հայերը, բնավ չեն հանդուրժել գինեմոլությունը և անողոք պայքար են մղել դրա դեմ՝ հաճախ դիմելով հայոց դիցարանի՝ բոլորի կողմից սիրված աստվածուհուն՝ Աստղիկին, **որի** շքեղահյուս դրասանգերով զարդարված բազարանում, բազում **հնարքներով** փորձել են չարածին ախտից ազատեն այդ թշվառներին. նրանց կերակուրի մեջ գաղտնի լցրել են տհաճ հավելումներ՝ անտանելի սրտխառնուք առաջացնող, իսկ ըմպելիքների մեջ ձիու քրտինք, որոնք մարդուն ստիպում էին **հրաժարվել** գինուց:

Պարզվում է թանկարժեք քարերը ևս կարող են կանխել արատավոր այդ սովորությունը: Մեր նախնիները հավատացնում են, իսկ պապերը հավաստիացնում՝ ագաթը մարդուն իրավմամբ հեռու է պահում գինու ազդեցությունից. ի հակառակ **մյուսների**՝ այդ քարը կրողը ոչ միայն չի կորցնում սթափությունը մեկ-երկու բաժակից, այլ կտրականապես հրաժարվում է խմիչքից: Գինովությունը **չեզոքացնող**, մոգական զորությամբ է **օժտված** նաև թե՛ մեղեսիկը և թե՛ նռնաքարը:

Տեղեկություններ կան, որ գինեմոլները, սկսած չորրորդ դարից՝ մեկուսացվել են **հասարակությունից.** Սևանա կղզու վանքի խնկաբույր պատերի ներսում դեղագործ-բժիշկները տարատեսակ խոտաբույսերի թուրմերով բուժում էին տառապյալներին, և նրանցից ոչ մեկ իրավունք չուներ լքել կղզին, քանի դեռ չէր ապաքինվել ու **ինքնակամ** հրաժեշտ տվել գինուն:

1. Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով կետադրական սխալները և անհրաժեշտ տեղերում լրացնելով բաց թողնված տրոհության նշանները:
2. Բնագրից դո՛ւրս գրիր սխալ գործածված բառերն ու բառաձևերը՝ դիմացը նշելով ճիշտ տարբերակը:
3. Գրի՛ր բնագրում ընդգծված բառերի խոսքիմասային արժեքներն ու շարահյուսական պաշտոնները**:**
4. Բնագրից դո՛ւրս գրիր երկուական բարդածանցավոր ածական և գոյական՝ ընդգծելով արմատը՝ մեկ, ածանցը՝ երկու գծով:
5. Բացատրի՛ր տրված դարձվածքների իմաստները. երկու ոտքով կաղալ, անձյուն ձմեռ, երեսի վրա թողնել:
6. Տրված շարքից ընտրի՛ր կազմությամբ պարզ բառերը, բացատրի՛ր իմաստները. *դեղձան, հովատակ, հոռի, ճամարտակ, խարան, անկյուն, հերյուն, պատեհ, մածուկ, քանակ, մատակ:*
7. Գրի՛ր 4 պարզ նախադասություն բացառական հոլովի տարաբնույթ կիրառություններով՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը:
8. Կազմի՛ր նախադասություն տրված կաղապարով. Հատկացուցիչ, ենթակա, բացահայտիչ, տեղի պարագա, ժամանակի պարագա, ստորոգյալ, որոշիչ, ուղիղ խնդիր:
9. Գրի՛ր շարադրություն «Հանուն իմ երկրի» վերնագրով (առնվազն երկու էջի սահմաններում):